ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ՝ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Գյումրի 12.11.2010թ

Հայտնում ենք Ձեզ, որ Ձեր կողմից նախաձեռնված ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի Արամ Խաչատրյան փողոցի N 9 շենքի կտուրի կառուցման աշխատանքները բարձր որակով ամբողջությամբ ավարտված է:

Անհրաժեշտություն ենք համարում շենքի բնակիչների անունից խորհին շնորհակալություն հայտնել Ձեզ և Ձեր նախարարության աշխատակազմին, ինչպես նաև տանիքը կառուցող « Մ եվ ԱԱ» ՍՊԸ շին. կազմակերպությանը, հատկապես տնօրեն պարոն՝ Մ. Խաչատրյանին, կտուրի կառուցման աշխատանքները բարձր որակով կազմակերպելու կապակցությամբ:

Շնորհակալություն ենք հայտնում նաև ֆինանսական աջակցություն ցուցաբերած մյուս շին. կազմակերպությունների ղեկավարներին, իրենց բարեգործական և մարդասիրական վերաբերմունքի համար:

Դժվար է պատկերացնել, թե հիմա ինչքան երջանիկ են զգում իրենց ահավոր աղետ տեսաց գյումրեցի բնակիչները, որոնք շուրջ քսան տարի ապրել են առանց կտուրի, կաթոցների տակ...

Իսկ այժմ, Ձեր շնորհիվ ազատվեցինք այդ անմարդկային ապրելակերպից,ուստի կրկին անգամ ընդունեք շենքի բոլոր բնակիչների անունից երախտապարտ լինելու շնորհակալական խոսքը՝ և թող որ Ձեր նման նախարարին աստված միշտ լինի պահապան և օգնական:

Հարգանքներով՝ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի Արամ Խաչատրյան փողոց N 9 շենքի բնակիչներ.

1. Հակոբյան Աշոտ –
2. Հարությունյան Լենա –
3. Պողոսյան Լյուդա –
4. Խաչատրյան Արարատ –
5. Պապովա Զինաիդա
6. Գրիգորյան Սուսաննա
7. Մուրադյան Գարեգին
8. Պետրոսյան Նազան
9. Հակոբյան Գոհար
10. Բարսեղյան Վարդ –
11. Դարագյոզյան Կոստան –
12. Գրիգորյան Սամվել –
13. Հովհաննիսյան ~~Արտուշ~~
14. Զաքարյան Աշոտ –
15. Վանցյան Արեգնազ –
16. Միրալյան Քնարիկ –